

ԹԻԼՆ ԱԿԱՐԱՅՐԻ

Բ. ՏԱՐԻ 1867 ԹԻՒ Գ.

ՄԱՐՏ

Խ Օ Ս Փ

ՊԱՊԱԿԱՆ ՀԱՅՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ
ԼՈՒՍԱԿՈՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ (1)

Քաղաքաց 1860 թու կունիսկ ՀԱՅՈՅ ԱՇԽԱԲԱԴԻ ամառից ե. թու ,
ԽՈՍՔ ՀԱՅՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԼՈՒՍԱԿՈՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ
ՀԵՐԻԿԵՐՆ յօդուածէն :

“Տարուբերենք ուրեմն շտապով միանգամ մեր նայուածքն
անցած և ներկայ գարուս սկիզբէն մինչեւ մեր օրերը և տես
նենք թէ՝ մեր նախորդներն ի՞նչ են խորհել և ի՞նչ են արել
մեր Ազգային և բարոյական Լուսաւորութեան համար և յե
տոյ մեր ժամանակուայ մարդկանց խորհածներն ու արած-

(1) Պապական Հայք իրանց գլխաւոր պարտք են արած Հայոց
մէջ պապականութիւն տարածելու թէ գործով թէ խօսքով եւ թէ
գրով, այդ պարտքը նրանց մէջ տեսնում ենք, որ նորոգւում է ամեն
օր, նոր հնարքներով եւ ջանքերով, այդ ջանացողութեան մեծ
ապացոյց են ցոյց տալի իրանց մէջ իրանց համար ամենազիտուն
կարծուած գլուխներն, ուստի մենք էլ մեզ, ոչ թէ միայն նուիրա-
կան պարտք կը համարինք մեզ պաշտպանելը, այլ նաեւ յարձակիլ
անդադար այդ մեր Եկեղեցու ընտանի թշնամիներու վրայ բուն
իսկ իրողութիւնքը զէնք անելով մեր ձեռին :

յում, Պոլսնիայում, Դրանսիլվանիայում Հայոց աշխարհին և Հայաստանեաց Եկեղեցւոյ որդւոցմէ որքան դադթողներ կային յափշտակելուց յետոյ, Տաճկաստան և Հայաստան յարձակեցան միւս մնացած խեղճ ու թշուառ որդիքն էլ որսացին տարին և իրանց Հռովմայ Պատի սովալուկ որկորին կուրաբին :

Արդ, Հռովմայ Պատիը այս քափուս, ծպտուն, վարձկան, կերծաւոր, բանսարկու, միջեռանդ և խաւարապաշտ առաքելական քարոզիչների արքանեակներին իրանց վարդապետներէն շատ դերազանցեցին թէ ճարտարամութեամբ և թէ հնարադիտութեամբ, վասն զի իրանց առաջնորդ ունէին Յիսուսեանները : Այս պապականութիւնը՝ ինչպէս վերեւ յաւուաջ բերինք և ոչ մի ամենափոքր փոփոխութեամբ, այլ մի տրիչ հրապարիչ քողով ծածկած, սկսան աւելի շերմ եւ ուանդով մեր երախաններէն բռնած մինչեւ ծերունիների սրբում ու մտքումը՝ ահադին գրքերով, անհամար գրքուկներով քարոզել և ուսուցանել, երբեմն քարոզչական ճանապարհորդութեամբ, երբեմն պապական տէրութեանց պաշտապանողութեամբ, մինչեւ որ այն Հայքն սրոնք խեղճ, ողորմելի, թշուառ, անտէր և անպաշտպան Հայաստան, Պարսկաստան, Տաճկաստան և մինչեւ Հնդկաստան ցրուած էին, զուրկ իրանց հայրենական կրօնի աւանդութենէ և ազդային և բարոյական կրթութենէ և ուսմունքէ որսացին, յափշտակեցին նենդութութեամբ, ոմանց բուն Հայ ձեւանալով, ոմանց տէրութեանց պաշտպանութիւն խոստանալով, ոմանց դիտութեանց և դըպութեանց դուռ բաց անելով և ոմանց մի խօսքով արքայութիւն խոստանալով . ու վերջապէս այս դարուս սկիզբները այլեւայլ քաղաքական հանգամանքների օգնութեամբ կանգնեցուցին պապականութեան դրօշը ի Պօլիս և ուրիշ քաղաքներումը :

Ի՞նչ էր սրանց թագուն դիտաւորութեան հրապուրող քողը, ո՞հ, ուշիմ ընթերցող, այն ամենապարսաւելի և ամենագատապարտելի խորամանկութիւնն որն որ մարդս կարողէ հնարել և ի գործ գնել: Հայրենասիրութեան հոգին եբրեւ վերարկու իրանց վրայ առած՝ նրա արտաքին դարդարանքով, այսինքն գրականութեամբ, ինչպէս ասացինք հա-

Եկեղեցու աղդայնութիւնը , բարոյականութիւնը , անկախութիւնը նախնականութիւնը պաշտպանել են պապականութեան գէմ պատերազմելով , սրանց , ասում ենք , Միսիթարեանք մեղ՝ իբրեւ խռովարար , անմիաբան , տղէտ , անիմաստ , շաղ փաղի և այլ օրանց նման անխիղճ ածականներով են ծանօթացուցել , և միշտ ջանացել են մեղ էլ արհամարհէլ տալ , նրանց պարսաւելով և գատապարտելով⁽¹⁾ . Հինգերորդ , Միսիթարեանք վենետիկու և Վիեննայու մի ամբողջ գարումը չորս

(1) Պապական Հայք , մանաւանդ գիտնականներն իրանց մէջ , օրինակի համար ՏՍՐՇԵՐՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՒՂԻԿԵ ՀՐՈՎՄՔԱԿԱՆ ԵՒ ԷԶՄԻԱԾՆԱԿԱՆ ԴԱՏԱՆՈՒԹԵԱՆՑ անուն զրգին հեղինակն , իրանց մատն են փաթաթել եւ հարիւր հազար անգամ մեր ականջին հալել . թէ մեր նախնիք Հռովմայ Պապն ընդունել են իբրեւ գերիշխան հայրապետ Եկեղեցու եւ թէ մենք այսօր չենք ընդունում եւ մեր նախնեաց ուղղութենէն մոլորւում ենք : Այդ մի շնծու փաստ է խարեւայ եւ խորամանկ , եւ կողմնական պատմագրերի ձեռին , ինչպէս են Չամչեան Հայքութիւնը եւ նրա հետեւողները : Նախ , մեր նախնեաց ժամանակ , այսինքն չորրորդ եւ հինգերորդ գարերում , Հռովմայ եպիսկոպոսութիւն էր , եւ ոչ Գերիշխանական պապութիւն , ինչպէս եղաւ տամներորդ գարեն մինչեւ այսօր : Այսօր խաղաղութիւն կը լինի բոլոր քրիստոնէից մէջ , եթէ Հռովմայ Պապը իր նախնական կերպարանքն նորէն իր վրայ առնէ , այսինքն լինի Հռովմայ եպիսկոպոս , ինչպէս որ էր Մեղքեսարոսի ժամանակ , հացի սրամէն , եթէ մեր նախնիք Հռովմայ Պապն ընդունել են իբրեւ գերիշխան հայրապետ , ուրեմն ինչ հարկաւոր է նորէն քարոզութիւն այն ժողովրդին , որ միանդամ ընդունելէ , թող ուրեմն Հռովմայ գահն Հայքն էլ ուղղափառ ճանաչէ , ամեն բան կը պրճնի եւ թէ խելք ունենար սկիզբէն էլ այդպէս կանէր եւ այսօր բոլոր Հայքն իր ծոցումը կը լինէր , բայց իր միտքը ճշմարտութիւն քարոզել եւ պաշտպանել չէ , այլ ակրապեակը ժողովրդոց վրայ , ոչ իբրեւ թագաւոր , ոչ իբրեւ կաթողիկոս , ոչ , այլ իբրեւ Աստուած - Մարդ հոգւոյ եւ մոռքի վրայ տիրելու եւ մարդոց արիւնն ըմպելու : Փառք Աստուծոյ տեսնում է այսօր լուսաւոր աշխարհն այդ պապութիւն վիճակը եւ իբրեւ իր վերջին թշուառ վիճակին հասնողի վրայ նայելու պէս է նայում նրա վրայ եւ տեսնում է որ յոյս չկայ փրկութեան : Տես Բօմնօ արքայի , շրջաբերական թղթերը Փարիզ տպուած Հռովմայ Պապի գերիշխանութեան ոչնչութեան մասին :

Եւրոպիոյ ազգաց ծանօթացնողներն , լաւ կը լինէր , որ ամեւնեւին ծանօթացուցել չէին մեղ , քանի թէ ինչպէս որ արել են իրանց դրքերումը , վասն զի Ռուբինեանց իշխանութենէն մինչեւ այսօր , որ եօթն ութը դար է լինում , գեռ Եւրոպացիք մի ճիշդ և ստոյգ տեղեկութիւն չեն ունեցել մեր վրայ այսինքն Հայոց ազգի և Եկեղեցու , թէ և բիւրաւոր քարոզիչներ , ճամբորդներ եկել են և գնացել Արեւելք :

Թագէսս և Բարթուղիմէսս առաքելոց ժամանակէն մինչեւ Քաղկեդոնի ժողովը մեր նախնիք Եղել են ըստ պապականաց , Հոռովմէական ուղղափառ , իսկ Քաղկեդոնի ժողովէն յետոյ , որն որ մեր նախնիք , ոչ մի ժամանակ չեն ընդունել և մենք էլ նորերս բնաւ պիտի չընդունինք , կիսով չափ Արքուսական ենք Եղել , կիսով չափ Նեստորական , և յետոյ էլ Եւտիքական կամ Դէսուկորուսեան : Այսպէս հետզետէ մերժուղղափառ Ենք Եղել , այսինքն Յունադաւան կամ Պապադաւան , մերթ հերձուածող կամ հերետիկոս : Իսկ այս վերջին ժամանակներն Եղել ենք Յակոբիկեան , Սաքրամենթեան⁽¹⁾ . Բայց վերջապէս Եւրոպացիք այս դարումս ճանաչել են Եղել մեղ իբրեւ ուղղափառ քրիստոնեայ , բայց միայն Պապի գերիշխանութիւնը չընդունող և հայր Աւգերերեանի թրոքական դայումն ասած ճառերէն համոզուելով , Գրիգոր Պապը 1836 թուին մեր սուրբ Գրիգոր Լուսաւորիչը իբրեւ սուրբ է ընդունել և Հայաստանեայց Եկեղեցու վրացէն Եւտիքական և Նեստորական անուններն հանելով , ասելէ Հայք հերձուածող , Հայք Աշմիաբան , Հայք Էջմիածնական , (ծիծաղելի յորջորջում պապականաց ստեղծածը) իրանց Հոռովմէական ամենառողջափառ . Ժողովրդէն զանազաննելու համար :

Այսպէս ուշիմ ընթերցող , Միսիթարեանք , եթէ իրանց քարոզած ազգային և բարոյական լուսաւորութեամբ մի փոքր ծառայումէին , ոչ թէ մեղ , այլ իրանց ժողովրդին , ահա Եկաւ հասաւ Հասուն ու վերջին ահադին հարուածը տուաւ

(1) Տես , Բառգիրք Աստուածաբանութեան Բէրժէի , Փարիզ տպուած այս դարումս , Հայք եւ Հայոց Եկեղեցի յօդուածները մեր ասածների ստուգութիւնը որոշելու համար : Այդ բառգիրքն լատինական Եկեղեցւոյ մէջ գտնուած այդ տեսակ գրքերէն ամենէն ընդունելին է :

նրանց իբրեւ հերետիկս և հերձուածող ամբաստանելով
Պապի մօտ, խլել տուաւ նրանցմէ մի նոր դաւանութիւն,
որոյ մէջ Միփիթարեանք երդումով Պապն ու Հռովմայ գահն
իբրեւ դլուխ եկեղեցու խոստովանեցան և մեզ էլ իբրեւ
հերձուածող ճանաչեցին : Խակ Հասուն յաղթանակը տանելուց
յետոյ ինքն էլ տէր և իշխան հոգեւոր եղաւ Պապէն յետոյ բու-
լոր Հայ պապականների, նրանց եկեղեցիների, վարժարան-
ների, գողբելանքերի վրայ և իր նախադահութեանը հնազան-
գեցուց, պատրիարք, եպիսկոպոս, վանահայր, առաջնորդ
և ժողովուրդ : Կործանեց, հալածեց և բաժանեց իրարմէ
Միփիթարեանց կուսակիցներին, նրանց վարժարաններն ու ա-
շակերտները փչացուց, վերջապէս ջնջեց նրանց ազդեցու-
թիւնը ժողովուրդի վրայէն և իր իրաւադատութեան ներքեւ
ածեց բոլոր Պապական Հայքն : Ինքն էլ փառքով, պատով,
ոսկեփունջ գտակով, ծիրանի վերարկով և ոսկեշղթայ խա-
չով վարձատրուեցաւ և փառաւորուեցաւ Պապէն և կարդի-
նաների ժողովէն . ի զուր տեղ ժողովուրդը բողոքեց, պօռաց
կանչեց, գանգատուեցաւ, նա հաստատուեցաւ իր իշխանու-
թեան մէջ մինչեւ մահ, նախադահ լինելով մեր Հայոց աշ-
խարհի դրեթէ յիսուն վամսուն հազարի չափ որսացուած և
մոլորուած որդւոց հոգւոյն, մտքին հանձարոյն և գանձին վը-
րայ :

Այս բոլոր աղմուկէն, մի միայն չորս վարդապետ և մի
քանի աշխարհական գտնուեցան, որոնք բաւական քաջ լի-
նելով և իրանց ազգային և բարոյական պատիւը ճանաչելով
եկան իրանց մայրենի եկեղեցւոյն ծոյը :

Ահա, այս հետեւանքն յառաջ եկաւ, այդ ազգային և
բարոյական լուսաւորութենէն, որոյ ակունքը մեր նախորդնե-
րէն ոմանք կամակորութեամբ և փառամոլութեամբ կուրօ-
րէն պնդում էին և կարծում էին թէ Հռովմէական եկեղե-
ցու մէջն է և որն որ պատճառ եղաւ Հայոց աշխարհի որդւոց
կորստեան և փչանալուն ի կամենեց, իլփով, վենետիկ,
Լիվունո, Մարսիլիա, Բէրա, Զմիւռնիա, բէֆէ եւ այլ քա-
ղաքներումն ուր որ գնացել էին ապաստան գտնելու յուսով :

Այս, փչացան եւրոպիոյ Հայքն իրանց եկեղեցիներովը վան-
քերով և տպարաններովն և մնացին միայն փոքր Ասիոյ մէջ

և կոստանդնուպոլիս մի քանիք, որոնք հաղիւ քառասուն յիսուն հազարի կը համեին, և որոնք ոչ Հայոց ազգին և ոչ Հայաստանեաց Եկեղեցուն ամենափոքր օդուան չունենալուց յետոյ իրանց մէջ էլ ամենափոքր լուսաւորութեան նշոյն անգամ չի երեւում, թէ որ մի հաշիւ անելու լինինք թէ ծրագարերէն մինչեւ այսօր Հայոց աշխարհի որդւոց և նրանց սերնդի թիւն, որոնք Պապականութեան վարակն են ընկած մինչեւ մի միլիոնի կը հանի :

Արդ, ուշիմ ընթերցող, Հռովմայ խազաղար, լուսածաւալ և սիրատարած Պապի, որ ինքն իրան յաջորդ Յիսուսի, և բացարձակ գերիշխան և միահեծան տէր է կարդել ընդհանուր Եկեղեցու վրայ, մեր Հայոց գլխին հասուցած հարուածների և Լենկթիմուրի, Շահաբբասի, Նատրշահու և ուրիշ թալթարների և Սրաբների մեղ տուած աղէտների մէջ ի՞նչ տարբերութիւն կը գտնէք. Ըստ մեղ ոչինչ տարբերութիւն, մանաւանդ այդ վերջինների տուած հարուածները մի փառք և պարծանք կը համարինք Հայաստանեաց Եկեղեցու աղասութեան և նրա հաւատացելոց նահատակութեան համար⁽¹⁾ :

(1) Միսիթարեանց Հայկական գրականութեան մասին մեր հայեցուածքն ուրիշ անդամի համար կը թողէնք յառաջն հանելու մեր ընթերցողին: Խակ Հռովմայ Եկեղեցու վարդապետութեանց մասին, առանց աստուածաբան վարդապետ լինելու եւ առանց մի մեծ աշխատութիւն մեր վիզն առնելու պատրաստ ենք դոհացունել մեր հարցասէր ընթերցողների կամքը:

Ա Զ Գ Ա Յ Ի Ւ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ
ՆԵՐԾԻԾ ԵՎ ՄԱՀԻՆ ՄԻՆՉԵՒ ՄԱՏԹԻՈՍ Ա. ԱՅՏԱ ՄԱՀԻ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ա.ԶԳԱՅԻՒՆ ԱՐԴԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

1857 — 1866

(Շարունակութիւն. Տես Թիւ ԺԱ. Երես 569):

Այսպէս, ամենայն Հայոց կաթողիկոսը փոխանակ թիֆ-
լիդու Հայոց եկեղեցիներուն, ուսումնարաններին և վանքե-
րին այցելութիւն անելու, եկեղեցական, ուսումնական ու
վանքական կառավարութեանց վրայ տեղեկութիւն ստանա-
լու, և նրանց ուղղութիւնն ու ընթացքը քննելու, թէ արդ-
եօք համաձայն են Հայաստաննեայց եկեղեցու հոգուն, ինչ-
պէս որ Հայոց ժողովուրդը սպասում էր նրամէն, նա հան-
դիսաւոր այցելութիւնք և առանձին տեսութիւնք անելով
էր զբաղած։ Այսպէս որ՝ ոչ թէ ամենեւին ժամանակ չու-
նեցաւ ճանաչել թիֆլիդու Հայոց ժողովուրդին բարոյական
և ազդային դրութիւնը, հապա նաեւ նրա հոգեւոր կա-
ռավարութեան ընթացքն անդամ չիմայաւ ու շհասկացաւ։
Այդ էր և Ռուսաց կառավարութեան ցանկացածն ինչպէս
նաեւ Զալալեանց Սարգսին և իր խորհրդականներին։ Մատ-
թէուը, որ թիֆլիդու մէջ տասն օրէն աւելի մնաց, հաղիւ
թէ մի քանի գեղին ու սպիտակ գոյներով ծեփած եկեղե-
ցիներ տեսաւ, առանց նրանց ներքին վիճակին վրայ տեղե-
կութիւն ստանալու։ Այսպէս էլ եղաւ իր այցելութիւնը
Նէրսիսեան հոգեւոր ուսումնարանին։ Զալալականք հին
ուսումնարանի շէնքն երեսի վրայ թողած, մի պանդոկ էին
գնել մի քիչ հեռու հին շէնքէն, այդ պանդոկի պատերն
ու դռները կանաչ ու գեղին ներկերով վլվացուցել էին,
դասարաններ և ննջարաններ սարքել և մի սերտարան տ-

նունով սրահ պատրաստել, որոյ կշտին էլ՝ մի մատենագարան և խօսարան, բակն էլ ընդարձակ չորս դէնն ունենաւ լով սեղանատունը, խոհարանը և տնտեսատունը։ Տարակցոյ չկար, որ այսպէս մի պատրաստուած ուսումնարան իր արտաքին փայլուն ցուցովը Մատթէոսի աչքերը պիտի շլացունէին. վասն զի, յիրաւի նա ոչ Պօլում և ոչ էլ Խղմիրումն էր տեսած մի այդպիսի խանի նման ուսումնարան։ Զալալին և էր խորհրդականների նպատակն էլ հէնց այդ էր։ Եկեղեցու պատերը սիստակ ծեփելով և յատակն էլ կարմիր ջուխուելով նրա ներքին աղտեղութիւնը ծածկելէին, նոյնն արել էին և ուսումնարանի համար։ Ողորմելի Մատթէոսն էլ միայն արտաքինը տեմնելու աչք ունէր, ուստի զմայլեց մնաց։ « Փէք աղըոր, Փէք աղըոր է », ասում էր նա իր չորս դէնն եղանակներին, որք էին Այլագեան Գաբրիէլ վարդապետը, Մակար եպիսկոպոսը, Անդրխմնուալուսոյ Սարդիս եպիսկոպոսը, հոգաբարձուք, ուսուցչապետները, Զալան ու իրանները և այլ քաղաքացիք ու աստիճանաւորք։ « Ես ալ, ասում էր, Խղմիրի գպրոցը ծաղկեցուցի, ինկիլիղի լեզուի վարժապետ դրի, աղջիկներու համար դպրոց շինել առուի. Պուրսա ալ դպրոց հաստատեցի. ան մէկանները ի՞նչ ըրին, գէորգը, Յակոբը, իլլէ ան Պօղոս օլաճախը ամեննեւին սէր չունէ դպրոցներու վրայ։ Այս խօսքերն, ասում էր Մատթէոս ծանօթ և անձանօթ հանգիստեսներին ուսումնարանի դասարանները ման դանիս, մինչեւ որ վերջապէս դնաց իրան համար պատրաստուած սրահը և իր աթուին վրայ բազմեցաւ դաւազանը ձեռին։ Բոլոր բաղմութիւնը նրա չորս կողմն առին։ Կարենեանց Յակոբ վարժապետն, որ ուսումնարանի Հայոց լեզուի ուսուցիչն և Սարգոսի մօտ խորհրդականն էր, այս միջոցին սրահին մէջ տեղն դրուած ամպիտի վրայ վեր կացաւ ձեռին բոնած մի թուղթ ու ըսկաւ մի ճառ կարդալ։ Այս ճառի ընթերցումը գլութէ մի ժամ տեւեց, նախնեաց լեզուով էր գրուած, նա իր ամեն ջանքն էր թափում ատենաբանի նման կարդալ, բայց չէր յաջողում, վասն զի զուրկ էր այդ չնորհը էն, իր առողանութիւնն անդամ վեմութիւն չունէր, իսկ ճառին նիւթն ամեննեւին ժամանակին յարմար չէր, խօսում էր ու խօսում

զասէր զուրանին զոհելով չկարողացաւ իրան մշկիթի մէջ գումարել։ Տիեզերահոչակ Հռովմն եւս իրան արքայութեան բանալիներովը չկարողացաւ իրան փարախի մէջ ժողովել։ Փերճ թիւղանդիօնի ձեռն եւս չհասաւ իրան գաւիթը տանելու ժամանակաւոր թագաւորութիւնով աչքերը խաբելով։ Տարանք մենք ամեն զրկանքին և գերութիւններին, որոնց մարդկութեան թշնամին կարողացաւ հնարել։ Սակայն հաւատարիմ կացանք այն ուխտին, որը որ կապել ենք թագէսոփի և Գրիգորի հետ և կնքել ենք Յիսուսի խաչի արիւնով և այս ուխտիցը աշխարհի բաներից ոչինչ չկարողացաւ և չի կարող զըրկել մեղյասի մեջ յաւխտեան» (1)։ Այս խօսքերով կարենեանցը կամենում էր ասել թէ՝ թէ որ սէր և միութիւն ունենանք կարող ենք գիւցաղնութիւն անել։ Բայց իր հասկացած սէրն ու միւթիւնն ուրիշ բան չէր, հապա միայն Զալալին և իր խորհրդականացն իրերեւ ազդի լուսաւորիչ ընդունել։ Վասն զիս այս ժամանակ թիֆլիզու ժողովուրդն երկուսի էր բաժանուած։ Զալալեանք, որ կը նշանակէ աէրութենականք և անտիջալալեանք, որք էին առհասարակ Հայոց ժողովուրդն։ Այս ճառասաց Յակոբ վարժապետն էլ Զալալական էր։ Այդ բաժանումը մինչեւ այսօր կը տեւէ և ինչպէս կերեւայ միայն Զալալեան Մարգսի մահովը պիտի վերջանայ, թէ որ Ռուսաց տէրութիւնը նորէն Զալալներ չստեղծէ Հայոց մէջ։ Մի բան զարմանքի արժանի էր կարենեանցի ճառին մէջ, այն էր, որ ամենէն ներին Ռուսաց կայսեր և նրա մեծամեծների անունները չէին յիշատակուած իրերեւ բարերար եւայն։ Այդ մի խորամաննէ զգուշութիւն էր անշուշտ կամողիկոսը քնեցնելու այդ մասին։

Երբ ճառախօսութիւնը վերջացաւ, աշակերտաց հարցաքննութիւնն եղաւ, տեսանք որ նոյն ճառախօս վարժապետը, «զի՞նչ է ճարտասանութիւն, զի՞նչ է տրամբանութիւն» աւսելով հարցուիրը էր անում նրանց։ մի փոքր յետոյ էլ թըլուատ մի քահանայ երկարամօրուս ու ոլորած պեխերով ու հասարակ դէմքով, քրիստոնէական վարդապետութենէ հար-

(1) Տես, Կառանակ Հայոց աշխարհի հանդիսին Ա. տարւոյն /Դ. թըւոյն 185 երեսը, Կարենեանց Յակոբ վարժապետի ճառը արդեան լեզով/ հրատարակուած։

հրապուրը . աշքերը մանր են և սուր ու սաստիկ տգել
և դաւաճան իր հողւոյն, երեսի դոյնը թուխ տժդոյն, մա-
զերը սեւամորթների ցեղէն . քիթը ձեւաւոր, բայց ան-
պաշտօն, վասն զի հոս ամենեւին չառներ, քիմքը նոյնալէս
ո՞լ դիտէ ինչ սպատճառով, ոչ ուտելիքէ համ կառնէ և ոչ
ըմպելիքէ, ձեռներն ու իր զգեստները միշտ կեղտոտ թէ
և թաւիշ ու տիպա հազնի, իսկ բարքն ու վարքը, խելքի
կարողութիւնը և իր խօսքի զօրութիւնն իրան մօտիկ եղող-
ները և շատոնց ճանաչողները լաւ կը ճանաչեն, ուստի մենք
էլ այս տեղ իր և իրան քաջ ճանաչողների նկարագրութիւնքը
յառաջ կը բերենք : Դեռ Հաղբատայ վանքում միաբան է
եղել, երբ իրան վանաց պատահէ ուրիշ, սուտիկ սուտ, անունը
տուել են . Թիֆլիզու փոխառաջնորդ եղած ժամանակ, ան-
վեհելն աղքասէր Պ. Մ. Նալբանդեանցը Քիրառ անունով նրա
ստանաւոր նկարագիրն է արած, որն որ շատերին յայտնի է
և այսօր էլ Զալալեանցն ամբողջ ուռւսահպատակ Հայոց մէջ
այդ Քիրառ անունով է ծանօթ : Բայց այդ նկարագրէ զատ
երկու ուրիշ նկարագիր էլ ունի Զալալեանց Սարդիս եպիս-
կոպոսը Մեղու Հայաստանի լրագրումը, որոնց հեղինակն է
Մատինեանց Տէր Ստեփանը : Այդ նկարագրերի առաջնոյն
վերնագիրն է «Մարտ վարդան»⁽¹⁾, իսկ երկրորդին «Բաշ-
ազիւ կաշ և բնէ»⁽²⁾ «Մատինեանց Տէր Ստեփանն առաջնոյն
մէջ Սարդիս եպիսկոպոսին անունն է դրել Բիշ Ալ և դուրս է
բերում դրան մի ապերախտ և տմարդի որդի դէպի իր հայրը
և անհորաշար, «բարձու», խարշաբ, խաբերայ, շանուէր, նէնիստոր, իւշ-
ուստիր, կեղծաւոր, փառաւուէր, հացիւու, անիւուր, անիւզէ և օնիւ նարտ :
Երկրորդին մէջ Բիշա Ալի անունը փոխել, կոչել է Սարդին
Բաշա . քնչուի որդի և մարդասպան : Բայց դժբաղդու-
թեամբ Մատինեանց Տէր Ստեփանի այս երկրորդ այլարա-
նօրէն և երգիծական յօդուածը գրաքննիչն արդիլուելով կի-
սատ մնաց : Ճշմարիտն մենք էլ կը վկայենք, որ այդ քահա-
նայն քան զամենքը քաջ կարող է գիրասասին նկարագրել,

(1)Տես, Թիֆլիզու Մեղու Հայաստանի լրագրի 486՝ տարւոյն թ.
թիւը :

(2)Տես նոյն լրագրի, նոյն տարւուայ թ. թիւը :

Նէութիւնն զսերմանեալն 'ի սրբոց առաքելոց 'ի Թագէսսէ եւ 'ի Բարթուղիմէսսէ եւ զվերանորոգեալն սրբոյն 'ի Գրիգորէ մերոյ Լուսաւորչէ . եւ ապա կալանաւորեալ գնաց յԱպար աշխարհ եւ ընկաւաւ զմարտիրոսական պսակ, պսակելով զԵկեղեցին Քրիստոսի իւրով վարդապեղ արեամբ : Նոյն ժաման ներկայացան յիմում երեւակայութեան գառն աղէաք այնր ժամանակի, անձնադիր ջանք հոգեւորականաց եւ իշխանաց յազագո Ազգի եւ Եկեղեցւոյ եւ համեմատեալ զայն ընդ այժմեան բարուց գոչեցի յանկարծ : Զարթիր ովլ սուրբ Հայրապետ եւ տես թէ զիմորդ կերպարանափոխ եղեւ աշխարհ ամենայն, վերացան բանութիւնք կուապաշտ թագաւորաց, անցին, գնացին եւ անհետացան : Արծուենիշ զրօշակն Ռուսաց կայսեր հոկէ 'ի վերայ Հայաստան աշխարհի եւ ամենայն ինչ կայ 'ի խորին . խաղաղութեան 'ի կողմանէ օտարաց, այնքան տարրացան 'ի մեզ անգոսնելի հետապնդութիւնք առ անարժանս : Ոչ եւս կարես գտանել զՂեւոնդ, զԱրշէն, զՍահակ, զՎարդան, զՎահան եւ զնոցին նմանս : Ոչ ու 'ի մէնջ դնէ զանջն յօդուոր աղջին և նիշովուոյ, ըստ վարչէանաց և են հոգուումն գուռով վորուու : Ուսումնականութիւնն այնր շարու նախկան իսպառ ընդ նախեց իսպառաւու և վէ՛ ի մէջ ուՄերուու և ու Ստահէ : Անեւ արդէն ըստ նմանութեան սորդէ կիրուց զարդարյան իսպեսութեան առ ի որու զինու 'ի զշաւաղութեան մայն ուրառակեալ : Գործ մէր և ժողովէն յանինեւն և ի իսրաւ չանաց և կեղծ դէմակէտ յեւնաշրբէ և 'ի վարդապետ յեւպէանակու և լինել աիրու զէմակաց . այդ էսէ և վահճանեական ինք մէր յագանական այնունետեւ հայ, մէղ ուրուլ ըմղել և ննջէլ : Նոյնակէս բազումք են յադգիր մերուու որք բանիս աղգասիրական որոտան եւ յօդս դղրդեն, իսկ գործով շրատոցեալ 'ի նոյն լուսոյ 'ի խորչս խաւարինս ապաւինին . բայց վշտալի է զի որ որոտայ ոչ ինչ գործէ եւ որ գործէ եւ ոչ որոտայ, խոչընդուն նորին լինին :

Կման հոգեւորականաց այնր դարու էր Հայրապետն Կերոսէս Ե. Աշտարակեցի . բայց աւամզ, զի եւ նա 'ի մէրոց անարժան գործոց 'ի խոր խոցեալ վշտալի ցաւօք եմուտ ՚ի գերեզման զհօտն Քրիստոսի թողլով 'ի խորին տիմութեան » (1) :

Զալալին ճանաչեցինք իր խօսքով թէ քէշմուտի անդու է, հիմա տեսնենք թէ իր խորհրդականներն ինչ շնորհքի տէր մարդիկ են : Զալալի խորհրդական լինելու պատիւ ունեցող ներն էին զլխաւորապէս տէր Սահակ Սահարունին, կարեն եանց Յակոբ վարժապետը, Սուրենեան Պատիմը, Թայիրեանց

(1) Տես նոյն Ճանապարհորդութեան 'ի մէջ Հայուստան . Հատ . Բ. Է. թէս . 202 :

Տէր Սահակ Սահարունին Գիրսասի հոդեւորական կարդէ եղող խորհրդականներին գլուխն էր : կար նաեւ մի ուրիշն էլ որ աշխարհական խորհրդականաց պետն էր . սա էր կարենեանց Յակոբ վարժապետը , որու ծնունդը կարինէն էր և որդեգիր կամ տիրայու կարապետ եպիսկոպոսի , որ 1828 թուին Թիֆ լիզ գալով լինում է իբրեւ պատուելի ուսումնական և նշանակում գրագիր կոնսիստորումը . սա էլ մի արտաքոյ կարդի մարմնոյ կաղմնաւած ունի . սեխաձեւ մի զլուխ միխրագոյն աչքերով , պեխերն ածիլրւած նուրբ շրթունքներով և ուռ քթով , կղակների վրայ փիւրիւղ և գորշ մօրուք թողած , քամակը իբրեւ կուղ գուրա ձգուած և ծնկներն էլ միշտ գէպ՚ի առջեւ ցցուած . ձեռին միշտ մի գաւազան քթախտոտի տրփով և աղտոտ ու խունացած թաշկինակով : Սա լինում է ներսէս կաթողիկոսի ժամանակ կարապետ եպիսկոպոսի տանող բերող բանսարկուն . ան ժամանակին իր համբաւը հռչակուում է իբրեւ առաջին կարդի խորամանկ մարդ և խառնակիչ : Իբրեւ թէ հայագէտ մէկը համարուելով կուրերի աշխարհում ; Երբ մի քիչ կարդալ գրել գիտեցողը մասնովէին ցոյց տալի , Ներսիսեան ուսումնարանում Հայոց լեզուի ուսուցիչ է նշանակում . այդ այշտօնը բաւական է լինում մեր Յակոյն (կայրենեանց Յակոբ վարժապետին մականունն է) ուսուահպատակ ազգայնոյ դործերի մէջ խառնուել գուեհիկ տկարների ղէնքը ձեռին : Սրա զէնքն է լինում սողան կենդանու կերպարանքն առնել և յիրաւի գեանաւուիւծի նման , որ առարկայի մօտ որ մօտենում է , նրա գոյնն է վեր առնում , այսինքն , որ մարդու մօտոր լինում է , նրա սկզբունքը դաւանող է ցոյց տալի իրան , այնպէս որ ազգային զգացմունք ունեցող անձինք նրան իրանց պէս են ճանաչում , տէրութեան մարդիկ էլ նոյնպէս տէրութեան շահուն և օգտին մոլի նախանձախնդիր : Գրական մարդիկ գրասէր , ուսումնականք էլ նոյնպէս : Այս հնարքով Յակոբ կոր կարենեանցը կարող է լինում մօտենալ ամեն կարդի մարդկանց , կաթողիկոսներին , եպիսկոպոսներին , իշխաններին , պաշտօնաւորներին և ուսումնականներին . լինում է երբեմն նել եւ բաւական եղան միայն մի իմաստակ եւ անհեթեթ յօդուած հրատարակել իբրեւ պատասխան :

գրանց նման գրեանք : Հբատարակած ունի Եղերերդութիւն աշնունվմի քանի խօսակցութիւն և Մ . Պատկանեանցի հետ էլին ԿՈՒԹԻՑԻՑԻՍ անունով Ռուսերէնէ թարգմանուած մի դիրք : ՇՈՒՇԱՆԻԿ անուն մի թատրոն, Մլիթարեանց տպած խորենացու վրայ ծանօթութիւնք համեմատած մի ձեռագրի հետ : Մի այս է մի փոքր նշանակութեան արժանի գործը պարոն կարենեանցի, իսկ իր միւս բոլոր գրուածքները, որոնք թէ ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ լրաղ բումը և թէ ԿՈՆԿԱՆ մէջ հրատարակուած են ոչինչ բաներ են և շատերը գրուած են սրա ու նրա թելագրութեամբ այս ինչ կամ այն ինչ նպատակի համար :

Այս մարդն է ահա, Զալալեանց Սարդիս եպիսկոպոսին դշխաւոր խորհրդականը, սրան էր վաստահացած թէ Ներսիսեան ուսումնարանի հոգաբարձութիւնը և թէ իր առաջնորդական գործերը, ուս էր նմանապէս ուղղիչ և գրեթէ շարագրող Գիրսասի անունով հրատարակուած ծանարհորդութիւնն իմեծն Հայաստան գրքին : Սա էր նաեւ գահին զարդարանքը, իր սեղանին պատիւ ամողը, և իր ամեն բանսարկու գործողութեանց խորհրդատուն և իր սիմօնական գործերի մէջ էլ կլիծօնակերը :

Գիրսասի սիրականներէն մինն էլ էր Սուրբէնեան Գաւիթթը . որու վրայ արդէն խօսած ենք մեր Յիշատակարանի սկզբումը⁽¹⁾ : Սա էլ գիշեր և ցորեկ Գիրսասի մօտն էր ընկած և նրա ամեն խորհուրդներին և գործերին մասնակից էր, գրամէն հեռու և զած ժամանակին կամ գլուպումն էր գտնուում թուղթ խաղալու համար, կամ թէ քաղաքային գործերի տեսուչ կուուղէն շգէյն զօրապետին մօտ, որու գլխաւոր լրտեսն էր : Մարդշայ մեր ռուսիաբնակ ազգայնոց մէջ, որ Գաւթին ճանաշում չլինի . բայց իրրեւ ի՞նչ նշանակութեան տէր մարդ — երեսի ջուրը կորած մի յանդուգն լեզուանի մարդ, որ ոչ կրօնի, ոչ ազգի, ոչ պատոյ և ոչ մարդու զգացմունք կը կրէ իր սրտումը . արծաթու համար ազգ էլ, եկեղեցի էլ կը ծախէ, ինչպէս արդէն ծախել էր իր կրօնական ուխտը Եղմիածնէն վախչելով և Թիֆլիդու Հայոց երիտասարդները կառավարութեան մատ-

(1) Տես նախընթաց տարւոյն Յունուար ամսատեղին մէջ 40 եւ 43 երեսները եւ ներքեւի ծանօթութիւնը :

նելով։ Այս , այս Դաւիթ՝ Սուրէնեանը Գիրասափ սաստիկ սիրա-
կանն էր և իր խորհրդակիցն իր ամեն չարագործութեանց ,
շատ անդամ մենք իր բերնէն նրա վրայ գովեստով խօսիլը լը-
սած ենք։ Մինչեւ անդամ Ռուսի կառավարութեան հրամա-
նով երբ Դաւիթը չարաջար մահով մեռաւ , Գիրսասը նրա դի-
ակը սուրբ Յակոբայ վանքումը թաղեց :

ԿԱՆՈՆԳԻՐԻ

ԿԱՐՃ ԽՕՍՔ ԴՐԱ ԿԱՐԵՒՌՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Համոնց էր, որ մեք հետամնւտ էինք ձեռք բերել մի կանոնդիրք, բայց միշտ մեր հետամնութիւնը պարապն էր ելած, վասն զի որքան կանոնդիրք որ տեսած էինք, ոչ մէկը մի ամբողջութիւն չունէր . ոմանք թերի էին, ոմանք վատ և նոր օրինակուած, ոմանք էլ հատակոր բան . վերջապէս այս անդամ մի բաղդաւոր պատահմունք մեր ձեռքը ձգեց մի ընտիր և ամբողջ ձեռագիր կանոնդրքի բամբակէ թղթի վրայ դրած, թէեւ առանց յիշատակարանի, և ահա կը փութանք հրատարակել այդ՝ նկատելով իրբեւ մի խիստ կարեւոր ուսմունք ազգային բանասիրութեան մէջ, և յիրաւի ըստ մեր հայեցուածքին, քրիստոնեայ Հայաստանի պատմութիւնը մեղ միշտ սոսկ զբոյց և աւանդութիւն պիտի լինի, քանի որ նրա եկեղեցական և աշխարհական կանոնքն ու օրէնքը մեղ անծանօթ պիտի մնան : Հայոց աշխարհի պատմութիւնը, որն որ կարող ենք բաժանել երկու մեծ ժամանակների շրջաններում, այն է՝ Յիսուս Քրիստոսէ յառաջ և յետոյ, կամ թէ Տարրապաշտ կամ կուապաշտ Հայաստան և Քրիստոնեայ Հայաստան կամ Հայաստանեայց Եկեղեցի, չենք կարող երբէք ճիշդ և սաոյդ սովորել մի միայն պատմագրերի և տարեգրերի տուած տեղեկութեամբը, եթէ միանդամայն չենք հետամնւտ լինել սովորելու և Հայոց աշխարհի աշխարհագրական, երկրաբանական, բուսաբանական բնութիւնքը, ինչպէս նաեւ նրա ընտանեկան, կրօնական և քաղաքական կեանքը : Եկեղեցական կանոնների գիտութիւնը մեծ լցոյ կը տայ քրիստոնեայ Հայաստանի ընկերական կեանքի վրայ, ինչպէս նաեւ աշխարհական օրէնքները նրա քաղաքական բարքի և վարքի : Ի հարկէ, որքան պէտք է մեղ իմանալ այդ եկեղեցական կանոնների պատմութիւնը՝ թէ ուր տեղ է իրանց սկիզբը և թէ ի՞նչպէս աւանդուել են կամ հաստատուել, այնքան էլ հարկ է մեղ խորը քննել թէ ի՞նչ հանդամանք ստիպել է մեր Սուրբ Հարոց այդ կանոնները հաստատել և մեր նախնեաց կեանքին մէջ բնաւորել : Այդ մասին մեր աշխարհի բնական տարերքների դիւ

տութիւնն է հարկաւոր՝ իմանալու համար հոգեւոր կամ բարոյական տարեքաների կարեւորութիւնը նախնեաց ընկերական կեանքի մէջ և այդ ՚ի հարկէ մի մեծ աշխատանք է, բայց ինչ անես՝ որ ամենակարեւորն է։ Մինչեւ հիմա մեր աշխարհի պատմութիւնը լոկ զրոյց և գրեթէ աւանդութիւնն է եղած, եկաւ ժամանակն այսօր բանաքննողական հայեցուածքով նկատել։ Այդ տեսակ նկատողութիւնն էլ ուրիշ կերպ չէ կարելի, մինչեւ որ կարող չլինինք սովորել մեր աշխարհի պատմութիւնն իր բնական, հոգեւոր և քաղաքական տարեքաներովը։

Ահա այդ է մեր առաջին և դլխաւոր նպատակը այս կանոնդրքի հրատարակելուն, թէեւ մի երկրորդ վախճանն էլ ունինք, այն է մեր ուսումնականաց առիթ և հեշտութիւն տալ իմանալու այժմեան մեր Եկեղեցու և Եկեղեցականաց մէջ գործածուած կանոնների ո՞ր տեղէ բզիսիլը և մինչեւ ո՞ր աստիճան գործադրուիլը և թէ այսօր էլ մեր ազդային ընկերական կեանքի համար ինչ օդուա կարող ենք քաղել մեր Սուրբ Հարոց հաստատած օրէնքներէն։

Բայց կարելի է մեզ ասողներ լինին, թէ ինչ կարեւորութիւն կարող են ունենալ Եկեղեցական կանոնները այս մեր ժամանակուայ համար, թէ նրանք մի ուրիշ դարու, մի ուրիշ աշխարհի համար են եղած։ Այդ յանկի խօսողներին մեր պատասխանն ուրիշ բան չէ, բայց միայն խօսեցնել այս տեղ պարոն կիղօն, որ իր լուսաւորութեան Պատմութեան մէջ Եւրոպայում, այսպէս կը խօսի Եկեղեցու կանոնների մասին։

Եկեղեցու կարգերի եւ կանոնների մէջ, պարոնայք, մի իր կայ, որն որ առ հասարակ շատ քիչ է նկատուած։ Այդ իրն է ապաշխարութեան կարգն ու կանոնը, որոնք որքան հետաքրքրական է զրանք սովորելը այսօր, այնքան էլ պատժական օրէնքի սկզբունքների եւ գործադրութեանց կողմանէ, գրեթէ բոլորովին միաբան են արդեան իմաստամիրական գաղափարների հետ։ Եթէ քննելու լինինք Եկեղեցու պատիժների որպիսութիւնը հրապարական ապաշխարութեանցը, որոնք իր առած պատուհասին դլխաւոր ձեւն է, կը տեսնենք, որ այդ պատիժների նպատակն է յանցաւորին կամ մեղաւորին սրտումը զզջում ներշնչել եւ տեսնողների սրտումն էլ բարոյական սոսկալի օրինակ։ Այս բանիս մէջ եւ մի ուրիշ խորհուրդ էլ

կայ խառն, մեղքը քաւելու խորհուրդը։ Զեմ խմանում իբրեւ ընդհանուր բնաբան, թէ կարելի՞ է արդեօք քննութեան խորհուրդը պատմի խորհրդէն բաժանել եւ թէ որ եւ է պատմումը, բացի մեղաւորին զղջումը պահանջելու, մեղքի մէջ ընկնելու վրայ եղողներն ազատելու եւ այդ մեղքէն հեռացնելու հարկէն եւ մի գաղտնի եւ ստիպող հարկ էլ չկայ, ինչ մեղք որ գործուել է քաւելու։ Մի դէն թողենք այդ խնդիրը, յայտնի է որ զղջումն ու օրինակը Եկեղեցու նըպատակն է իր ամբողջ ապաշխարական կանոններում։ Այս բանը պարոնայք, միթէ Տշմարիտ փիլիսոփայական օրէնսդրութեան նպատակն էլ չէ։ Միթէ այդ սկզբունքների զօրութեամբ չէր, որ այս վերջին դարումը եւ մեր օրերումն էլ հասարակաց իրաւունքների վրայ խօսող լուսանկատ մատենագրեր պատժական օրէնսդրութեան վերանորոգութիւնը պահանջեցին։ Բաց արէք դրանց գրքերը, օրինակի համար, պարոն Բէնթամի (1) գրքերը, ձեր զարմանքը կը տա-

(1) Երեմիա Բէնթամ Անկլիացին Լօնտոնումն է ծնած 1748 ին եւ եղած է հռչակաւոր իրաւագէտ եւ մատենագիր։ Փաստաբան լինելու համար ուսմունք է առել, բայց այն ժամանակուայ օրէնքների թերութիւնքը եւ դատարաններում տիրած ամեն տեսակ անկարգութիւնքն իր սիրտը նեղացնելով, լաւ համարեց իր կեանքը նըւիրել այդ օրէնքները վերամորոգելու եւ վերակարգաւորելու։ ուստի եւ շատ աշխատեցաւ նոր հիմունքի վրայ հաստատել օրէնսդրութիւնն ու քաղաքագիտութիւնը։ Իր հիմնական սկզբունքն է թէ օրէնսդիտութեան եւ թէ բարոյագիտութեան մէջ ուրիշ կանոն պէտք չէ ընդունել բայց ի օգուտը։ Դա իր վարդապետութիւնքն իր երիտասարդ հասակէն Հելուետիոսի Հոգի անունով գրքէն էր հանած։ Խիստ բարեկամ էր Ֆրանսիոյ Աղքայլն Ժողովոյն անդամ Բրիսոյին հետ եւ շատ անդամ Ֆրանսայում այցելութիւն անելով այն աստիճան յարգ ու պատիւ էր ստացել այդ երկրումը, որ Ֆրանսիական ազգային ժողովը նրան Ֆրանսաեան քաղաքայուր պատուանունը տըւաւ։ Բէնթամ 1852 թուին 84 տարեկան մեռաւ եւ կտակով՝ պատուէր թողուց, որ իր մարմինը անդամագնութեան թանգարանում տարուի եւ ճեղքուի։ Այս բանն անելով Բէնթամ, միտքն այն էր որ այդ մասին Անկլիայում տիրած նախապաշարմունքի դէմ կոուի։ Բէնթամ շատ գրուածքներ ունի թողած, որոնց մի մասն իր կենդանութեանը հրատարակուեցան եւ մի մասն էլ իր մեռնելէն յետոյ։ Գլխաւորներն են Բարոյագիտութեան և Իրաւուգիտութեան ակադեմիաները պատրաստութեաններն են։ Պաղագական և Պատժական օրէնդներէ վեց ճառեր։ Տեսնելու պատրաստութեաններն են և վարչապատճեններն են վեց։ Համայնադրեալու-

նի տեսնելով դրանց մէջ իրանց առաջարկած սպատժական միջոյնեւ րի եւ Եկեղեցու զործագրածների մէջ եղած իրերանմանութիւնը։ Տարակոյս չկայ, որ այդ մատենագրերն իրանց օրէնքներն Եկեղեցին փոխ չեն առած եւ Եկեղեցին էլ ամենեւին չէր դուշակել, որ մի օր իր օրինակն ամենասահնեռանդ վիլխովայներին խորհրդին պիտի ծառացէ (1)։

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ ԿԱՆՈՆԱՅ ԵԴԵՍԱ ԵՒ ԱՅՍ ԿԱՐԳ ԵՒ ԶԱՓ ԳԼԽՈՅՆ

- Ա. Կանոնք Առաքելականք . Գլուխ Լ.Դ. :
 Բ. Կանոնք Առաքելականք ՚ի ձեռն կղեմայ . Գլ. ԶԵ. :
 Գ. Կանոնք Հարցն հետեւողաց . Գլ. ԽԵ. :
 Դ. Կանոնք Նվկիականք մեծ ժողովոյն . Գլ. Ի. :
 Ե. Կանոնք Անկիւրիաց . Գլ. Ի. :
 Զ. Կանոնք Կեսարիայ . Գլ. Ֆ. :
 Է. Կանոնք Նիոյկեարիոյ . Գլ. Ի. :
 Ը. Կանոնք Գանգրեայն . Գլ. Ի. :
 Թ. Կանոնք Անտիոքայն . Գլ. Ի. :
 Ժ. Կանոնք Լաւողիկեայն . Գլ. ԾԵ. :
 ԺԱ. Կանոնք Սրբոյն Գրիգորի . Գլ. Ի. :
 ԺԲ. Կանոնք Սարգիկայն . Գլ. Ի. :
 ԺԳ. Կանոնք Կոստանդինուպուլոի . Գլ. Գ. :
 ԺԴ. Կանոնք Եփիսոսի Սուրբ Ժողովոյն . Գլ. Զ. :
 ԺԵ. Կանոնք Սթանասի Հարցման . Գլ. ԶԵ. :
 ԺԶ. Կանոնք Բարսեղի Կեսարացւոյ . Գլ. ԾԱ. :
 ԺԷ. Կանոնք Սրբոյն Սահակայ . Գլ. ԾԵ. :
 ԺԸ. Կանոնք Շահապիվանի Հայոց . Գլ. Ի. :
 ԺԹ. Կանոնք Սեւանուեայ թուղթ . Գլ. Ժ. :
 Խ. Կանոնք Ներսէսի եւ Ներշապհոյ . Գլ. Լ. :

Եթե կամ քեւալան : Պէնթամ այդ վերջին զրուածքով ապաշխարտական կարգի զործագրութիւնն առաջարկեց, որու համար կիդօ էլ իսոսում է : Վաշնառութեան վրայ պաշտպանութեան, Սահմանադրական օրենագիր : Քաղաքացու ընդիր սասանց : Ըէնթամ բաց ՚ի դրանցմէ ունի նաեւ մի շատ զրուածքներ, որոնց ամենքն էլ անկլիական օրէնսդիրութեան եւ քաղաքազիտութեան վատթարութեանց գէմ են ուղղուած :

(1) ՏԵ՛ս, Կառունի Հայոց աշխարհի 1861 թուի Հոկտեմբեր ամսուայ համագիսումը կիդօյ, Պատմութիւն Գաղաքակրթութեան որ յիւրուպիա, Երես 744 :

- ԽԱ. Կանոնք Յովիաննու Մանդակունւոյ . Գլ. Ժ :
- ԽԲ. Կանոնք Սքրահամու Մամկոնոյ . Գլ. Գ :
- ԽԳ. Կանոնք Սահակայ լիրջնոյ . Գլ. ԺԵ :
- ԽԴ. Կանոնք Յովիաննու իմաստասիրի . Գլ. ԼԲ :
- ԽԵ. Կանոնք Միմոլիթ Հայոց Կաթողիկոսի . Գլ. ԽԳ :
- ԽԶ. Կանոնք Մուաքելոյն Թաղէոսի . Գլ. ԼԳ :
- ԽԷ. Կանոնք Մուաքելոյն Փիլիպպոսի . Գլ. Ը :
- ԽԸ. Կանոնք Անտիռքայ երկրորդ . Գլ. Թ :
- ԽԹ. Կանոնք Եփիեմի Խուրին Ասորւոյ . Գլ. Ը :
- Լ. Կանոնք Կիւրզի Աղեքսանդրացւոյ . Գլ. Ե :
- ԼԱ. Կանոնք Եպիփանու . Գլ. Ե :
- ԼԲ. Կանոնք Եղիշէի Վարդապետի . Գլ. Ա :
- ԼԳ. Կանոնք Անտիռքայ երկրորդ . Գլ. Ա :
- ԼԴ. Կանոնք Նվիկականք երկրորդ . Գլ. ՃՖ :
- ԼԵ. Կանոնք Վաջականոյ Աղուանից . Գլ. Ի :
- ԼԶ. Կանոնք Բարսեղի ալէօպէս ախտեց . Գլ. ՎՀԲ :
- ԼԷ. Կանոնք Գրիդորի աստուածաբանի . Գլ. Լ :
- ԼԸ. Կանոնք Գըւնի Սուրբ Փողովոյն . Գլ. ԺԲ :
- ԼԹ. Կանոնք Մակարայ Երտսադէմի հայրապետին . Գլ. Թ :
- Խ. Կանոնք Սահակայ Հայոց Կաթողիկոսի . Գլ. Ա :
- ԽԱ. Կանոնք Յովիաննու Մանդակունւոյ . Գլ. Ա :
- ԽԲ. Կանոնք Կարնոյ Սուրբ Ժողովոյն . Գլ. Թ :
- ԽԳ. Կանոնք Ներսիսի հայրապետին . Գլ. ԽԳ :
- ԽԴ. Կանոնք Յովիաննու Մանդակունւոյ Հայոց Կաթողի . Գլ. Ե :
- ԽԷ. Կանոնք Սրբոյն Կիրմէսիոսի . Գլ. Ա :
- ԽԸ. Կանոնք Եպիփանու Կիպրոսուոյն . Գլ. Գ :
- ԽԹ. Կանոնք Երուսաղէմի Կիպիսկոպոսի . Գլ. Ա :
- ԽԱ. Կանոնք Հիպողիգեայ Սրբոյն . Գլ. Ա :
- ԽԲ. Կանոնք Նեքտառեայ Հոռմայ եպիսկոպոսի . Գլ. Ա :
- ԽԸ. Կանոնք Մելիտինի Եպիսկոպոսի . Գլ. Ա :
- ԽԳ. Կանոնք Սրբոյն Աթանասի մեծի . Գլ. Ա :
- ԽԸ. Կանոնք Սիերանոսի . Գլ. Ա :
- ԽԳ. Կանոնք Սոկրատայ . Գլ. Բ :
- ԽԸ. Կանոնք Դիմուսիանի Արիստագացոյ . Գլ. Ա :
- ԽԵ. Կանոնք Մանուէլի . Գլ. Ա :
- ԽԶ. Կանոնք Կղեմայ Հոռմայ եպիսկոպոսի . Գլ. Ա :
- Տեառն Յոհաննու Մանդակունւոյ ՚ի կոչու մն ասլաշխարտթեան
առանձիւ :

Սահման + և կառն + պր էդին աշխերդութ Քրիստոսի Եկեղեցւոյ որբոյ
յեր վերանալոյ Տեղան :

